

# **«Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

**«ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի մայիսի 17-ի ՀՕ-86-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16-րդ հոդվածի 23-րդ մասը լրացնել նոր 7-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«7) Սույն օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած քանակներով ֆիզիկական անձանց կողմից առանց հավաստագրի ներմուծվող անձնական օգտագործման դեղերի համար:»:

**Հոդված 2.** Օրենքի 21-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասը լրացնել նոր 3-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3) Սույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած քանակներով առանց հավաստագրի անձնական օգտագործման դեղեր ներմուծող ֆիզիկական անձինք:».

2. 7-րդ մասի 1-ին կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«1) օտարերկրյա պետություն մեկնող և օտարերկրյա պետությունից ժամանող ֆիզիկական անձի բուժման կուրսի կամ անձնական օգտագործման դեղերի կամ փոխադրողի կողմից և (կամ) միջազգային փոստային փոխադրումներով մեկ ամսվա ընթացքում ֆիզիկական անձանց անուկնով ներմուծվող անձնական օգտագործման դեղերի համար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած քանակներով:»:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը: